

ՅՈՎԱՅՐ



Ե. Տարի, Թիւ 4, Սեպտեմբեր 1, 1931

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻԿ ԶՆԳՉՈՑ ԽՕՎԱԽ ԸՆԹԵՐՑ. ԸՆԿ.-ԵԱՆ

Հրատարակելի Գրութիւններ Դրկի 852 N. Hoyne Ave., Chicago, Ill.

Ե Պ Ա Ծ Ը

Կասկած չկայ որ հայրենակիցներ կը բաղձան լսել ստոյդ պատմութիւնը Զնդուչի Վերը. Միութեան վերջին Պատգ. ժողովին, որ ցրուեցաւ առանց ուեւէ որոշման յանդելու:

«Երիտասարդ Հայաստան»ի եւ «Բանւոր»ի մէջ հրատարակուած գրութիւնները, ինչպէս նաև մի քանիններու կողմէ սորոգրուած կոչը սխալ ներկայացուցած եւ գլխովին յեղացած են իրողութիւնը, ուստի համառօտիւ պատմենք իսկական եղելութիւնը:

Պատգ. ժողովը գումարուեցաւ Կեդր. Վարչութեան յայտարարած ժամուն եւ վայրին մէջ: Ներկայ էին Կեդր. Վարչութեան դիւանի անդամները եւ պատգամաւորները, բացի նիւ Եորքի պատգամաւոր Տիկ. Ա. Ստեփանեանէ եւ Լորինսի պատգամաւոր Ս. Յակոբեանէ:

Կեդրոնի ատենապետին բացման խօսքերէն յետոյ, ժողովը իր աշխատանքին սկսաւ եւ առաջն առթիւ ստուգեց Ամերիկայի մասնաճիւղերու պատգամաւորներուն յանձնարականները, որոնք ճիշտ գտնուելով վաւերացուեցան: Նիւ Եորքի պատգամաւորին բացակայութեան տուն տուող պատճառը եւ յարակից պարագաները ներկայացուեցան ժողովին եւ ժողովը միացեալ քուէարկութեամբ որոշեց Տիկ. Ա. Ստեփանեանը ճանչնալ օրինաւորապէս ընտրուած պատգամաւոր եւ անմիջապէս հրաւիրել զայն ժողովին նիստերուն: Այդպէս ալ եղաւ:

Արտասահմանի մասնաճիւղերը — Մարսէլ, Պէյրութ եւ Հալէպ — իրենց պատգամաւորներու ընտրութիւնը յանձնած էին Կեդր. Վարչութեան, որ իր կարգին ներկայացուց ժողովին, եւ ժողովը վերոյիշեալ մասնաճիւղերուն ձայները տուաւ Տիկ. Վ. Փազումեանի, Ս. Մաթոսեանի եւ Սամուէլ Փապումեանի: Խօսք չի կրնար ըլլալ որ վերոյիշեալ հայրենակիցները օրինաւոր եւ մանաւանդ պարտաճանաչ անդամներ են Միութեան: Այս պարագան իսկ զանց ընելով չարաչար կը սխալին անոնք որ վերոյիշեալներու ընտրութիւնը խնամիական հաշիւներու կը վերագրեն: Ժողովը ընականաբար չէր կրնար սրահին դուռը բանալ եւ փողոցին անցնող հրեաներն ու այրիշները ներս կանչել ու զանոնք պատգամաւորի աթոռին վրայ նստեցնել, պիտի ընտրէր հոն ներկայ

եղողներէն, եւ միայն ու միայն վերոյիշեալները, ինչպէս նաև Տիկ. Վ. Մաթոսեան եւ Պրն. Պ. Կակօւան ներկայ էին ժողովին այդ պահուն, վերջինը բացարձակապէս մերժեց պատգամաւոր ըլլալու բազմիցս եղած առաջարկը:

Այսպէս ժողովը պատգամաւորներու օրինաւորութիւնը ստուգելէ յետոյ, ընտրեց իր գիւաւը, ատենապէտ՝ Պ. Փապումեան եւ ատենապէտիր Կ. Թուխմանեան: Ընտրուեցաւ յանձնախումբ մը, որու յանձնուեցաւ հարցերու գասաւորման եւ հաշուեքնութեան կրկնակի աշխատանքները:

Ժողովը հարցերու նկատառման սկսելէ առաջ լսեց մասնաճիւղերու տեղեկագիրները, ինչպէս նաև Կեդր. Վարչութեան գրաւոր տեղեկագիրը: Անհրաժեշտ է որ հոս ըսենք թէ ժողովը բուռն ծափահարութեամբ ողջունեց ընթերցումը տեղեկագրին, որ մի առ մի կը թուէր Կեդրոնին միամեայթէ նիւթապէս եւ թէ բարոյապէս աննախընթացօրէն արդիւնաւոր գործունէութիւնը:

Ասկէ յետոյ ժողովը դաշիր առաւ ճաշի համար, ինչպէս նաև պատկհանութիւն տալու որ ընտրուած յանձնախումբը իրեն վստահուած գործը կատարէ եւ ժողովին ներկայացնէ յաջորդ նիստին:

Ճաշն վերջ ժողովը կրկին ի նիստ գումարուեցաւ, ներկայութեամբ բոլոր պատգամաւորներու, քանի որ եկած էին երկու բացակայ պատգամաւորները՝ Տիկ. Ա. Ստեփանեան եւ Ս. Յակոբեան: Ներկայ էին նաև չորսէն հինգ հանդիսականներ:

Յահն վերջ ժողովը կրկին ի նիստ գումարուեցաւ, որոնց մի առ մի նկատառման ձեռնարկուեցաւ անմիջապէս: Յահն ճնախումբը ներկայացուց նաև Կեդրոնին հաշիւները՝ կէտ առ կէտ ճիշտ գտած եւ վաւերացուցած ըլլալու յայտարութեամբ:

Յոս կարեւոր է որ ըսենք թէ, ըստ արձանագրութեան, մասնաճիւղեր (բացի արտասահմանի երեք մասնաճիւղերէն) բոլորն ալ իրենց քիչ կամ շատ նիւթական պարտաւորութիւնը կատարած էին՝ մասնակցած ըլլալով կարօտեալներու ի նպաստ նուիրաւութեան: Եիքակօ միայն կարօտեալներու ի նպաստ գումար մը զրկած էր, վստահութիւն յայտնելով որ Օգոստոսին տրուելիք դաշտահանդէսով մը պիտի լրացնէր իր պարտաւորութեան կատարումը: Լորչնս յորս հարիւր տոլար զրկած էր կեդրոնին, սակայն այս գումարը, պէտք

է որոշ ըլլայ, որ հին դրամ էր, եւ որ ի հեճուկս կեղրոնի հետապնդումներուն, Լօրէնս կը մնար եւ միայն Մ. Յատկայուրեանի Լօրէնս այցելութենէն վերջ զրկուեցաւ կեղրոն։ Ասկէ որոշ կը հասկցուի որ Լօրէնսի մասնածիւղը եւ ոչ մէկ սէնք դոյացուցած էր ամբողջ տարուան ընթացքին՝ իբրև անդամատուք, ինչպէս ոչ մէկ սէնք դրկած էր նախորդ (1930) տարին, մինչ այն ատեն Շիքակօ ժողովին ներկայացած էր 300 տոլյարի չէքով մը։ Այս իրողութիւններէն զատ կար նաեւ տնտեսական տագնապը, որով այս տարի բացառաբ կարելի չէր տառացի խստութեամբ հետապնդել նիւթական օժանդակութեան հարցը եւ մանաւանդ կարելի չէր մասնածիւղերու նիւթական պարտաւորութեան կատարումին կապել պատգամաւորներու իրաւասութեան խնդիրը։ Ատիկա կը պատկանէր մասնածիւղերու, անոնք էին որ պիտի որոշէին թէ իբրենց ընտրած պատգամաւորը պարտաճանաչ եւ ուստի օրինաւո՞ր էր, եւ յետոյ Կեդր. Վարչութեան կը պատկանէր մասնածիւղերու օրինաւորութիւնը ճշտելու խնդիրը, անոր կ'իյնար որոշելու թէ այս կամ այն մասնածիւղը պէ՞տք է զրկել պատգամաւոր դրկելու իրաւասութեանէն՝ նիւթական անպարտաճանաչութեան պատճառաւ։

Այդպիսի խնդիր մը չկար ժողովին ներկայացուած, եւ ուստի Պատգ. ժողովին կը մնար ընթացք տալ իր աշխատանքին՝ նոյն կազմով եւ ի հարկին ու ըստ կարգին որոշում անցնել որ ասկէ վերջ ուստի մասնածիւղի անդամ հայրենակից կամ մասնածիւղ, որ իր տարեկվածը չէ տուած եւ կամ կեդրոնին հանդէալ իր նիւթական պարտաւորութիւնը չէ կատարած պիտի չկրնայ պատգամաւոր ընտրուիլ եւ կամ պատճառաւոր դրկել Պատգ. ժողովին։

Այս էր միակ ճամրան որու կրնար հետեւիլ ժողովը, եւ այս պարագան քանից բացատրուեցաւ ատենապետին կողմէ, սակայն երկու պատգամաւորներ — Գ. Մինասեան եւ Ս. Յակոբեան — վայրկեանը անդամ մը իրարու ետեւէ խօսք կ'առնէին՝ կրկին եւ կրկին յեղյեղելու նոյն անիմաստ առարկութիւնները՝ անհարկիօրէն զրադեցնելով ժողովը եւ ձգտեալ վիճակ մը ստեղծելով։

Վերջապէս ժողովը որոշեց պատգամաւորներու իրաւասութեան հարցը փակուած նկատել, եւ անցաւ հարցերու նըկատառման։

Առաջին հարցի կարդադրութեանէն յետոյ վեր առնուեցաւ երկրորդ հարցը՝ «Ծօվառ»ի հրատարակութեան խընդիրը։ «Ծօվառ» անկախ հրատարակութիւն մը ըլլալով բընականաբար ժողովը չէր կրնար անոր մասին որոշում անցընել եւ պարտազրել, ուստի հարցը նեկատի առարանուելէ յետոյ, քուէի դրուեցաւ եւ ջախջախիչ մեծամասնութեամբ շահեցաւ այն կողմէ որ կը ջատագովէր Միութեան կողմէ հրատարակութիւն մը ըլլալու եւ ատելի նպաստաւոր ժամանակներու յետաձգելու տեսակէտը։

Եւ ահա փրթաւ աղմուկը։

Ս. Յակոբեան սրտնեղած տրուած որոշումէն, «Դուք կ'ուզէք ամէն բան ձեր ուղածին պէս ընել, ես հոս գործ չունիմ» ըստ ու դէպի գուռ ուղղուեցաւ։ Յաւալի պարագան այն է որ փոխանակ ձգելու որ այս պարոնը գուրս ելլէ, հանգիտականներէ եւ պատգամաւորներէ ոմանք միջամտութեան ելան, եւ ահա պարոնը սկսաւ աւելի ու աւելի պոռաւ, որով ամէն ոք ձգեց իր աթոռը եւ խառնուեցաւ վէճին ու աղմուկին։ Խառնակութիւն մըն էր տիրեց։ Մէկը միւսին ըսածը չէր լսեր։ Ատենապետը ի զուր ջանաց խաղաղութիւնը վերահաս-

տատել եւ ժողովը չարունակել։ Անկարգապահութիւնը թուհ ու բոհու կատարեալ էր, (պէտք է ըսել թէ աթոս քաջ մէկ մէկու վրայ բնաւ տեղի չունեցաւ) Բարեկոնի խառնակութիւնը մը ուր լեզուները իրարու անհասկնալի էին այլեւ։ Փողոցի օտար անցորդներն անգամ սկսան կանգ առնել զրատոցին եւ հետաքրքուիլ ներսը անցուդարձէն։ Այս վիճակին մէջ ժողովը փակուեցաւ եւ ամէն ոք զուրս հանուեցաւ սրահէն։

Հարկաւ այսպէս չէր կրնար վերջանալ ժողովը, ատիկի պիտի ըլլար տեղի տալ ժողովը խանդարել ուղող երկու պարոններու կամքին։ Պէտք էր պատասխանատուութիւնը ծըտել եւ այնպէս ընթացք տալ աշխատանքին։ Ուստի դիմուլ խորհրդակցութիւնը մը յետոյ, որոշեց պատգամաւորները կրկին ժողովի հրաւիրել յաջորդ առաւօտ։ այսպէս ալ եղաւ գրաւոր նամակները զրկելով իւրաքանչիւր անհատի։

Ժողովը սկսաւ կիրակի առաւօտ ժամը 12ին, Խ. Աղնաւուրեանի տան մէջ։ Ատենապետը ժողովը բացաւ եւ յայտնաց երէկի ստեղծուած ամօթալի պէտքին համար, և որպէս զի ժողովականները երաշխաւորուին թէ ժողովը պիտի ընթանայ կարգապահութեամբ, անհրաժեշտ նկատեց որ նախորդ օր ժողովի խանդարման պատասխանատու երկու պարոնները ընդունին իրենց յանցանքը եւ ներդութիւն խնդիրն Պատգ. ժողովուն։ Պարոնները — Գ. Մինասեան և Ս. Յակոբեան — բառերը իրենց բերնին մէջ ծամծմէով մերժեցին ընդունիլ իրենց յանցանքը։ Ատենապետը նկատելով որ այլեւս անկարելի էր արդիւնաւոր ժողով գումարել և վատահ թէ անխուսափելի էր կազ ու կոիւր կրկնութիւնը, ժողովը փակուած յայտարարեց՝ Կեդր. Վարչութեան յանձնելով հարակած տնօրինութեանը, եւ մեկնեցաւ ժողովի։ Քիչ վերջ կը մեկնի Միութեան ատենապետ Ա. Փապունան, նկատելով որ օրինաւոր չէր ժողովը չարունակից։ Կէս ժամ վերջ կը ցրուին բոլոր հոն մնացողները՝ անկարել զտնելով ժողովին շարունակութիւնը եւ զիտակցելով անորինաւորութեանը։

Ընթերցողին կը մնայ հանել իր եղակացութիւնը և ճշտել իր գիրքը։ Եւ մենք վստահ ենք թէ լուրջ եւ բանիմաց ընթերցողին դերքը պիտի ըլլայ ի նպաստ կեղրոնին՝ ընդդէպ Պատգ. ժողովի խառնակիչներուն։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՐՏԱՔՍՈՒՄ ԵՒ ԿԱԽԱԿԱՅՈՒՄ

Միութեան Յուլիս 4-ի Պատգամաւորական ժողովի ձախողման պատճառներու և պատասխանատուներու մասին բացառիկ շրջաբերականով մը մէր մասնածիւղերուն զրկեցինք ժամանակին։ Այժմ, մասնածիւղերու վարչութեանց կողմէ Կեդրոն զրկուած նամակներէն քաղելով ի վիճակի ենք յայտարարելու բոլոր Վերաշնացի մասնածիւղերուն և Զնդուցի հայրենակիցներու թէ՝ Սարդիս Յակոբեան, Լուրիսէն, Մելիք Խաչոյեան, Նիւ Եսորքէն, և Գասբար Մինասեան, Եռւնիսին Սիթիէն, իրենց մասնածիւղերուն կողմէ կախակայուած եւ վուտուած են, որպէս Միութեան զոր ծունկութիւնը խանդարողներ եւ անհարկի աղմուկ յարուցած նկատելու։

Վերոյիշեալները ասկէ յետոյ ուստի իրաւունք չունի Զնդուցի Վերաշինաց Միութեան անունով խօսելու և գործ ձելու։ Ասիկա կը յայտարարենք ի գիտութիւն Ամերիկայի և արտասահմանի մէր հայրենակիցներուն։

240131 Վերաշինաց Միութեան կահարական ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԵՐ

Միութեանս Պատգ. Փողովք տեղի պիտի ունենայ Սեպ-
տեմբեր 6—7, Լէյպցի Տէյի օրերուն, Նիւ Եորք: Արդէն բո-
լոր մասնաճիւղերէն մեղ հասած են գրական պատասխաններ,
այսպէս որ Շիքակոյի, Լօրէնսի, Ֆրէզնոյի, Ֆիլատէլֆիոյ,
Նիւ Եորքի և Եռուիլին Սիթիի մասնաճիւղերը ժողովին հա-
մար ընտրած են իրենց պատգամաւորներ՝ ըստ կանոնագրի
որպամառութեանդ:

*** Ուրախութեամբ կուգանք յայտաբարելու թէ Հալէպի, Ոչյութի եւ Մարսի լի մասնածիւղերուն զրկուած կարուեալներու դրամները յարմարագոյն կերպով բաշխուած են անդույն վրայ եւ մասնաւոր ընկալազիրներ ալ վերագրածուած են կեդրոն։ Յառաջիկայ Պատգ. ժողովին մէջ նկատի պիտի առնուի արտասահմանէն Նոր Զնգուշ մեկնիլ ուղղներու խնդրանքները. արդէն ունինք Հ. Բ. Ը. Միութեան կողմէ հազորդուած կարեւոր տեղեկութիւններ որոնք պիտի տեկլիկացուին սոյն ժողովին եւ պիտի պատրաստուի հայաստան մեկնելու պատրաստ հայրենակիցներու ցանկը, բանի որ յոյս կայ թէ մօտ ատենէն դէպի Հայաստան ներգաղթը պիտի սկսի։ Այս առթիւ աւելցնենք որ Կեդրոնական Վարչութիւնը վերջերս հազար հինգ հարիւր (1,500) տոլար ևս զմարեց Հ. Բ. Ը. Միութեան Նիւ Եսրքի Վարչութեան։

*** Սան Ֆրանչիսկոյի եւ Օքլինախ մեր հայրենակիցները նոր առաջ երթալով կեզր. Վարչութեան կողմէ եղած գիտութիւնն, Յունիս 30ին սարքած են հայրենակցական դաշտահանդէս մը, ուր տասնհինգ հայրենակիցներ ալ Ֆրէզնոյէն դայած են քաջալերութեան համար։

Սոյն դաշտահանդէսին հասոյթը եղող ՅՅ տոլարը Ա. Փիլոյեանի եւ Մ. Փափաճեանի ստորագրութիւնը կրող Հայ- թեասիրական նամակով մը մեզ զրկած են, Միութեան նը- պատակին յատկացուելու Համար :

41460246

Բարեկամ մը կոչ մը բերաւ որ կարդամ: Ծայրէ ի ծայր
կարդացի եւ այն տպաւորութիւնը կրեցի թէ զատուկ կնոջ
մը դէմ յանդիման կը գտնուիմ, որովհետեւ կարդացածս
կոչ մը շատ հեռու զատուկի մը վլվլուին եր: Զատուկ մը՝
որ կ'ուոչէ իր գործած յանցանքը ուրիշի մը ուսերուն բեռ-
ցնել: Այս, Զնդու չի Վերաշխաց Միութեան Դրդ Պատզմ.
Ժողովին իրական ու պատասխանատու խանգարիչները՝ Ս.
Յակոբեանք հետ՝ նոյն այս կոչը ստորագրողներն եղած են,
մեր առած պաշտօնական տեղեկութեանց համաձայն:

Կոչք ինելագարի մը պէս կը յարձակի աջ ու ձախ, առանց փաստի ու ապացոյցի : Կը յարձակի երկու պատուական ընտանիքներու վրայ, առանց փաստի, ըսելով միայնթէ՝ Ստեփանեան եւ Փապուճեան ընտանիքի անդամներէն չէկէ աւելի պատգամաւորներ ընտրուած են ժողովին մէջ: Եթէ այս է միայն այդ ընտանիքներուն մէղքը, մենք կը ներկնք անոնց, քանզի այդ ինքնին ապացոյց մըն է անոնց կարողութեան ու օգտակարութեան մեր Միութեան համար :

Կոչը ստորապրողները ապա կը յարձակին Գնդուշի Վերաշինաց Միութեան Կեդրոնին ու անոր մասնաճիղերուն վրայ, եւ այնպէս կը նկարագրեն իբր թէ Միութիւնը դատարկած ու աւելքակ դարձած է իբր անցեալ փառքէն եւ այժմ կը հեծէ գերութեան տակ: Եւ երեւակայել որ այս բոլոր դրակարութիւնները կ'ըլլան առանց մէկ հատիկ փաստի ու ապացոյցի:

Հոս կ'ուղենք հարցնել այդ պարոններուն թէ՝ Ե՞րբ եղած
է այս Միութեան ամենազօրաւոր շրջանը, որ այժմ ալ Միու-
թիւնը ամայացած կը հռչակեն: Մեր գիտցածով ու Միու-
թեան տետրակներուն լոյսով Միութիւնը իր աշխատանքի
զօրաւոր թափը կը սկսի 1925ին եւ այժմ ալ կ'ապրի իր զօրա-
ւորագոյն շրջանը եւ ընդունակ դարձած է օր ըստ օրէ ա-
ւելի յառաջէիմելու: Ապացո՞յց կ'ուղէք, կարդացէք մաս-
նաճիւղերու արձանագրութեանց տետրակները, կարդացէք
Կեդրոնական Վարչութեան տետրակները եւ Պատգ. ժողով-
ներու արձանագրութիւնները: Հոս պիտի գտնէք որ այս
Միութիւնը ազտուած է իր նախկին աւատապետներու ձեռ-
քէն, չնորհիւ Կեդր. Վարչութեան լուրջ ու խելացի գոր-
ծունէութեան եւ մասնաճիւղերու սերտ գործակցութեան:

Վավլուկ փրցնողները կը յարձակին նաեւ մասնաճիւղերու վրայ եւ կը խօսին 400 անտարբերներու մասին, իրը թէ այս չէղոք անտարբերները ասկէ առաջ Միութեան անդամներն էին եւ այժմ կեզր. Վարչութեան պատճառաւ հեռացած են այս Միութենէն: Նորէն կը հարցնենք այս ջատուկներուն թէ՝ ե՞րբ, ո՞ր թուականին եւ ո՞ր մասնաճիւղին մէջ արձանագրուած են այս անտարբերները:

Եթէ դուք չեք կրնար փաստերով խօսիլ, մենք սակայն ձեր աշխերուն առջեւ եւ լոյս արեւին տակ կը գնենք այս Միութեան բոլոր մասնաճիւղերուն անդամագրութեանց տետրակները, 1918էն մինչեւ 1931, եւ կը փաստենք որ ու եւէ մասնաճիւղ իր տետրակին մէջ չէ արձանագրած 30-35 օրինաւոր անդամէն աւելին, հիմա ալ մեր մասնաճիւղերը զրեթէ ունին այս թիւերը: Դուք ՖիլատէլՓիան յիշելով հոն հ անդամ միայն կը հաշուէք մեր Միութեան համար, մենք շատ գոհ ենք մեր այս փոքր բայց կենսունակութիւն ունեցող մասնաճիւղէն: Իսկ մենք կը հարցնենք ձեզի թէ ո՞ւր են ձեր ցոյց տուած մնացեալ թիւերը, եթէ սիրտ ունին ինչո՞ւ չեն հատաքրքրուիր այս Միութիւնով, եւ ո՞վ է այս անտարեւութեան իրական պատասխանատուն, եթէ ոչ ձեր ընկեր «Կոռունկ»ը:

Նիւ Եռոքի և Եռևիրն Սիթիի մասնաճիւղերուն ցանցառութեան մասին կը խօսիք ու պատասխանատուները կը փնտոէք: Զարմանալի բան: Ինչո՞ւ հեռուները կ'երթաք ու րիշներ փնտուելու, կը թելագրենք ձեզի որ կարդաք ձեր գըր-րածները միայն, կարդացէք «Ե. Հայաստան»ը, կարդացէք «Բանուոր»ը եւ կարդացէք ձեր «Վլվլուկ»ը, այս Միութիւնը ամբաստանելու ի՞նչ փաստ ունիք, զիրար հակասող ձեր այդ երեք սնամէջ գրութիւններուն մէջ ոչինչ, բացարձակապէս ոչինչ կայ, բայց մենք այդ երեք գրութեան մէջ կը տեսնենք ձեր քանդողի սեւ հոգին եւ ուրեմն մասնաճիւղերու ցանցառութեան իրական պատասխանատուն: Կոչը կը խոստովանի Լօրէնսի մասնաճիւղին օրինաւոր ու պարտաճանաչ ըլլալը, չատ ուրախ ենք այս խոստովանութեան համար եւ Միութիւնը հսկարտ է Լօրէնսի մասնաճիւղով, որ իբր կարգապահ մասնաճիւղ կը գործէ Միութեան ու Կեդրոնի հողքին եւ կողմնակից էի կամ չէի խնդիր չունի:

Վլլուկը Քարիֆօրնիան կ'արհամարէն, այնտեղի մեր պարտաճանաչ մասնածիւղին օրինաւոր անդամները առ ո-չինչ կը սեպէ, անոնց ժրաջան գործունէութիւնը չի տեսներ, չուղեր տեսնել Սան Ֆրանչիսկոյի նորակազմ մասնածիւղը, չուղեր խոստավանիլ այս Միութեան օրէ օր զօրանալլ, կ'ու-րանայ այս Միութեան կենսունակութիւնը։ Բայց ինչո՞ւ են այս բոլորը, ի՞նչ է այս մարդոց նպատակը որ օր ցերեկով Միութիւնը քանդելու դերը կ'ուղեն ստանձնել։

Խելագար վկվուկը Շիքակոյի մասնաճիւղին օրինաւոր անդամներու թիւը կ'իջեցնէ 10ի, այն ալ ոչ թէ իբր մասնա-

ճիւղ, այլ Կեդրոնի կողմնակից։ Բայց ուրկէ ստուգած են այս թիւը, արդեօք Շիքակոյի մասնաճիւղին մէջ լրտե՞ս կը պահեն, քանի որ այդ գիւտին աղբիւրը չեն ըսեր մեզ՝ ըսել է այս բոլոր զրապարտութիւններն ու վարկարեկումները Միութեան հասցէին կ'ըլլան դիտումնաւոր ու յետին նպատակներով։

Բայց Շիքակոյի մասնաճիւղը պատրաստ է իր անդամներուն ստորագրութիւնովն ու տարեկաներովը կրկին ներկայանալ Սեպտ. 6-7ին գումարուելիք Պատգ. ժողովին իր օրինաւոր երկու ձայնովը, եւ պահանջել որ ստուգուի իր հասցէին եղած ամբաստանովթիւնը, հակառակ պարզացին ամբաստանողներուն խստիւ պատժուիլը պիտի պահանջէ այս Միութենէն: Վելլուկը Պրն. Պետրոս Փապուճեանի (պատգամաւոր Շիքակոյի մասնաճիւղին կողմէ ընտրուած) օգտաշատ ծառայութիւնը անտեսելով եւ այս Միութեան անվիճելի մէկ անդամն (Լորէնսի մասնաճիւղին կը պատկանի) ըլլալը խնդրոյ առարկայ կ'ընէ, խսկ միւս կողմէն ինքը 400 չորս թիւերու մասին կը խօսի: Պ. Փապուճեան հինգտարի շարունակ պատգամաւոր եղած է Միութեան գերազոյն ժողովին մէջ, եւ իր «Ծօվառ»ի խմբագրութեամբ շատ աւելի օգտակար դարձած է մեր Միութեան, ուրեմն ի՞նչ նպատակով կը ջանան սուստերով ամբաստանել զայն եւ այլ օգտակար անհատներ, որով եւ անշքազնել Միութիւնը:

Կոչը Հնչակի, Վերակազմեալի, Խամկավարի խնդիր
կը յուղէ եւ զայն ստորագրողները իրենց ըրած զոհողու-
թեանց վրայ կ'ողբան։ Բանք անմիջապէս որ կուսակցական
հաշիւներ ու խորհուրդներ մեր յիշողութենէն դուրս են, .
իսկ զուք ձեր կողմէն այդ խնդիրը կրնաք փնտռել Արամեա-
նի, Գէորգեանի, Յակոբեանի եւ կոչը ստորագրող Խաչօ-
եաններու դատարկ գանկերուն մէջ։ Զոհողութեան խօսքը
կ'ընէք, կը խնդրենք որ պարդ խօսիք. ձեր ըրածին քանակն
ու որակը հրապարակ գրէք, մեղի մի խօսիք Քալիֆօրնիոյ,
Շիքակոյի, Լորէնսի, Ֆիլատէլիփոյ, Նիւ Եորքի եւ ձըրզիի
զոհարերող անդամներու աշխատանքին մասին, անոնք
Միութեան հետ են ու անոր ոյժը կը կազմեն արդէն։

Յետոյ ամէն առթիւ Կեղրոսն Միակողմանի է կը պո-
ռաք: Ի՞նչ ըստ կ'ուզէք սա Միակողմանի բառով, մենք այդ
բառին իմաստը չենք հասկնար, կ'ուզենք որ բերաննիդ լայն
բանաք եւ մեզի բազատրէք թէ ի՞նչ է միակողմանիութիւնը:

Կոչը ի վերջոյ ուրախ է որ Կեղրոնական Վարչութիւնը
ինքն իր տեղոր լուծուած է, եւ բարին ալ աղդ կը համարէ:

Այո՛, պարոններ, Յուլիս 4-5ին գացիք Պատգ. Ժողովին որ խանգարէք զայն եւ կեղը. Վարչութիւնը լուծէք: այն վտարած էք Միութենին: Երթաք բարով: Դուք ո՞վ էք որ կոչ կը հրատարակէք մեր հասցէին ուղղուած, միթէ մենք ոչխարամիտներ ե՞նք որ առառուն կանուխ արթնցող հաւե իսկ կո՞ւկո՞ւկուի մէկ կանչով աքաղաղ դառնալ ուզէ մեր գլխուն, միթէ Միութիւնը զեռ ձեր գիտցած հին հաւենցը կը կարծէք որ աղուէսի նենդամտութիւնով ներս մտնէք ու քառ ու վառ ընէք: Զէ՞ք ուզեր հնագանդիլ Միութեան կանոնագրութեան ու ժողովներու տուած որոշումներուն, հետացէք մեր մէջէն:

Կոչին մէջ գերութեան մասին ալ կը խօսիք եւ ձեր աչք
ու խելք ունենալն ալ կը շեշտէք, ուրեմն հեռացէք եւ ձեր
ցոյց տուած խոշոր թիւերով խոշոր ալ Միութիւն մը կաղ-
մեցէք եւ դուք զձեզ ձեր ուզածին պէս կառավարեցէք, կըր-
նաք ձեր ուզած գոյներով դրօշակ մըն ալ պարզել, ահա ձեզի
անկախութեան հրաման: Բայց բնաւ մի մոռնաք որ Զնդուչի
Վերաշինաց Միութիւնը կը կառավարուի իր կանոնագրու-
թիւնովն ու օրինաւոր անդամներու ճայնովը միայն:

Սակայն այսքանն ալ չի բաւեր, ուն պէտք է մերկացնել վլվլուկի հեղինակներն ալ եւ զիրենք ներկայացնել իրեն անհատական արժանիքովն ու բարքովիր:

Առնենք Պրն. Պաղ. Նիզամեանը. այս պարոնը ամիսներու առաջ կեդր. Վարչութենէն 200 տոլար փոխ դրամ կ'ուզէ որ խանութ բանայ: Կեդրոնը խրատուած անցեալի սխալներից կը մերժէ Միութեան դրամէն ուեւէ մէկուն փոխատութիւն ընել: Կոչը ստորագրող երկու Քէհեախաչօեաններ կ'ուզեն երաշխաւորել կեդր. Վարչութիւնը որ պահանջուած գումարը տրուի Պրն. Նիզամեանի, սակայն կեդր. Վարչութիւնը կրկին կը մերժէ զբամ տալ ըսելով թէ՝ քանի որ զու երաշխաւոր ըլլալու յանձնապու կ'ըլլաք, գուշք դրամ ունի դուք տուէք, ինչո՞ւ կ'ուզէք որ Միութեան դրամէն տրուի: Ահա պատճառը որ Պրն. Նիզամեան եւ Քէհեախաչօեաններ կը թշնամանան կեդր. Վարչութեան եւ կոչ կը ստորագրի:

Պըն . Գասպար Մինասեան անձնական հակառակութիւն ունի Պըն . Ս . Մաթոսեանի հետ , քինը դուբրու չի կրնար կարգադրել , ուրեմն պէտք է Միութեան մէջ տանի զայն եւ միշտ չեւ անդամ Պատող . Ժողովին մէջ հակառակի Պը . Մաթոսեանի պատղամաւոր ընտրուելուն , եւ կոչին մէջ ալ վախիս Ալեսոցի կոչէ զայն , առանց յիշելու որ ինքն ալ Ալեսոչն շատ հեռու Ատիշցի է :

Պրն. Մելքոն Քուճուկեան մատ խածնել տուաւ մեղի կոչին տակ կը ստորագրէ զոհողութիւն ընողի հովեր առնելով. այս պարոնը Շիքակօ Եղած միջոցին այնքան երկար տարիներ ոչ այս Միութեան անդամակցած է եւ ոչ ալ Միութեան ձեռնարկներուն ներկայ Եղած է: Նիւ Եորք երթափյետոյ հանրութեան կոչ կը հրատարակէ... Մարդ պալած կը ստիպուի ըսկէ, Ե՞րբ հաւ եղա՞ւ, Ե՞րբ քառը ելաւ:

Իսկ Պրն. Մելիք Խաչօնան (ինկիլիզի տղան) իր տիպար չատուկի գերին մէջ է: Ս. Յակոբեանի հետ Պատգ. ժողովի բուն խանգարիչը եղող Խաչօնան կոչին մէջ ձեռքերը դիմու պարնելով կը պոռայ... Հայրենակիցներ, մենք ալ խել ունինք, աչք ունինք, կը տեսնենք, եւայլն: Բայց չըսեր թի՞նչ է պատահածը, խելք եւ աչք հեռու թի՞նչ մեղքը գործուած են, որ խելագարած ջատուկի մը պէս մազերը փետելով եւ փէշերը վեր քաշելով այս ու այն կողմ կը վախ: «Բանւոր»ին, «Ե. Հայաստան»ի դռները կը ծեծէ, կոչ կը հրատարակէ, զգալով իր մեղապարտութիւնը յանցանք ծածկել կը փորձէ, բայց ի զուր: Կեցի՛ր, սիրելի պարոն, հանդարտիր քիչ մը, տան մէջ եղած գողը բռնուած է: Դուք ինքը ես այդ գողը: Քու այդ ցաւագար կանչուրուտով չես կրնար օճիքդ աղատել ու գործած չարութիւններէդ խուսափիլ: Մենք քեզ կը ճանչնանք 1926էն ասդին: Դուն չէ՞ր որ 1926ին գրեցիր Պրն. Գէորգեանի եւ իր ընկերներուն թի՞ կեղբոնը մէկ քուէի առաւելութեամբ եւ ուստի միակողմանի ընտրուած է եւ անվատահելի է (ձեր խելքով մէկ քուէն արժէք չունի եւ դեռ ալ կ'ըսէք որ խելք ունիք) եւ Գէորգեան ու իր ընկերները ձեր այս գրածը իբր փաստ կը գործածէն մասնածիւղի ժողովներուն մէջ ու Կեղբոնին հակառակ դիր կը բռնէին, եւ զիտե՞ս որ Կեղբոնին պաշտօնական նամակն ու չունենական է:

ասրա ու չըշաբնականները անոնց համար ոչինչ կարո՞ւ քու այդ նամակիի քով, գիտե՞ս նաև Պրն. Մելիք, որ քու ընկերներուդ գրած նամակներուդ հետեւանքը ինչ եղաւ Այս եղաւ որ Միութեան 3000 տոլարը դրամատունէն փախ ցուեցաւ, որուն հետեւանքով ծագեցաւ Շիքակոյի ծանօթ զատը: Հիմա կը տեսնե՞ս քու նենդամտութեանդ ու գաւե րուդ արդիւնքը: Եւ դուք այն օրէն ասդին քնաւ չգագիւցաք այս Միութիւնը քայքայելու ձեր ջանքին մէջ, ամէն առին որ պատեհութիւնը ներկայացաւ զուք ձեր գատ զերին մէջ:

զտնուեցաք, եւ դեռ մինչեւ այսօր ալ ծրաբներով «Ե. Հայաստան», «Բանտոր» եւ ձեր հրապարակ հանած կոչը կը դրկես հոս բարեկամիդ Գէսրգեանին որ ցրուէ, սրճարաններու սեղաններուն վրայ դիզէ, հանրութիւնը Միութեան դէմ զրգուէ: Ահա դէմ մը փաստեր քու եւ ընկերներուն չոր ու ցամաք վրլուուկին դէմ, եւ դուք այս փաստերու դէզին տակ պիտի կքիք ու փանանաք:

Այս բոլորէն յետոյ որոշ գիտցէք որ այս Միութեան կարգն ու կանոնը կը գտնուի երկաթէ ձեռքերու մէջ եւ այդ ուժով ալ պիտի պաշտպանուի: Ուրեմն, քանդէլ փորձէից առաջ դուք ինքդինքնիդ կշռեցէք, այլապէս ապառաժի պիտի բախիք:

Ե. ԱՇՏԱՐԱԿԵՆՑ

Հիմակո

ԹՈՂ ՀՐԱՊԱՐԱԿ ԳԱՅ

Սուտի, չարամիտ զրպարտութեան եւ ամենաստորին խեղաթիւումի շեղակոյտ մըն է «Ե. Հայաստան»ի մէջ հրատարակուած Պատգ. ժողովի նկարագրականը՝ անծանօթի մը կողմէ:

Կարելի չէ երեւակայել որ մարդկային միաքը կրնայ այդքան մը վատասերիլ եւ զիջիլ վերիվայր շրջելու պարզ ու անպարտկելի իրողութիւնները, որովհետեւ ակնարկուած գրութիւնը յերիւրանքներու դէղ մըն է, ինեւադար մտքի մը վիժանքը:

Սուտ, բացարձակ սուտ են ինծի եւ կեդրոնին վերագրուած ըոլոր «մեքենայութիւնները»: Պատգ. ժողովը կանաւորութեամբ շարունակեց իր աշխատանքը, մինչեւ այն առեն երբ Սարգիս Յակորեան չուզեց ընդունիլ մէծամասնութեան որոշումը եւ սպառնաց ժողովը ձգել հեռանալ:

Դրութիւնը խել մը բարբանջանքներէ յետոյ, լուծուած կը հոչակէ կեդր. Վարչութիւնը: Ուշը տեսնուած է, ո՞ր կանոնագրութեան մէջ գրուած է որ երբ պատգ. ժողովը մը կը ձնողի իր աշխատանքին մէջ՝ Միութեան կեդր. Վարչութիւնը կը կորսնցնէ իր հեղինակութիւնը: Ահա յիմար ուղղի մը նոյնքան յիմար յղացումը: Բայց ասիկա արդէն գրութեան հեղինակն ինքը քիչ մը բարը կը հերքէ, երբ կ'ըսէ թէ ժողովը երեք հոգինոց յանձնախումը մը ընտրեց եւ իրաւասութիւն տուալ անոր որ հրահանգ հեղինակութիւնը յանձնախումը մէկն ալ ժողովը խանզարող վերոյիշեալ չնաշխարհիկ ծաղիկը եղած է, ամէն հեղինս վրայ:

Դրութիւնը՝ իմ ժողովէն կծիկը զնելու մասին կը խօսի: Եւ ո՞րմէ վախնալով ժողովէն փախուստ պիտի տայի, քամէլո՞ն: Ես ժողովէն հեռացայ զայն փակելէ յետոյ միայն, վատահ ըլլալով որ ձեզի պէս կամակոր յիմարներու հետ ժողովը շարունակելը պարապ ժամալածառութիւն պիտի ըլլար:

Դրութիւնը կ'ըսէ: — «Պատգ. ժողովը կոռուպաշտի վերածուցաւ «խմբագիր» Փապուճեանի խորդպային մէքենայութեանց երեսէն»: Օ՛, եա՛յ... Եւ ո՞ր քանի որ այսպէս կը խօսի ու ինքինքը անյայտ կը պահէ: Քաջերը երբ խըլլըրդպային գործեր կը վերագրեն մէկուն՝ իրենց ինքնութիւնը ծածկանունի տակ չեն պահէր: Թող հրապարակ գայ այդ սմակուկ արարածը եւ պիտի տեսնէ թէ ո՞վ է իրուրդը, ի՞նքը թէ ես: Ահա հրաւէր մը իսկական խլուրդին իր ստորկրեայ նկուղներէն դուրս գալու համար:

Հապա սա «Ե. Հայաստան»ի մենած խմբագիրը... հը՛, չարկաւ մենած, թէրթը մենած, խմբագիրը մենած, եւ ո՞վ ըլլայ ալէկ, ուրիշ բարի ծաղիկ մը՝ անունը՝ լսելովս՝ Սեղրակ Շահէն է: Այս մարդը եւ իր գործակիցները Հնչակեան կուսակցութիւնը քայքայէլէ եւ այսօրուան ողբալի վիճակին հասցնէլ վերջ, ատենը մէկ կ'ելլեն եւ տեղ կուտան իրենց

մեծածաւաւ՝ թէրթին մէջ այս ու այն խելապարի զրածին, րաներն ալ իրենց լութ գանկերէն յղանալով: Մէկ խոսք միայն պարոն Սկանդալ Շահէններ, եթէ ամբողջ Հընչակեան կուսակցութիւնը ոտքի ելլէ, նշանախեց միսկ չի կրնար վնասել Զնդուշի Վերաշինաց Միութիւն: Կուսակցական ոչ մէկ նկատում ու հաշիւ կրնայ մուտ գործել մէր Միութիւններս, եւ վատահ եղէք որ ձեր քաջալերութիւնն շփացածները մէկիկ մէկիկ գուրս պիտի չպրտուին Միութեան շարքերէն: Ամէք զատ, լաւ կ'ընէք, շատ լաւ կ'ընէք, եթէ ձեր տարաբախտ կուսակցութիւն եւ տարին մէկ քանի անգամ ու պատահարար լոյս տեսնող թէրթին մասին մտածէք եւ քթէրնիդ ամէն տեղ չկոխէք, մի զուցէ ետքէն ապացաւիք:

Եթէ այսքանը բաւական չէ, գարձեալ կը տեսնուինք... Պուրոն Պ. ՓԱՊՈՒՇԵԱՆ

ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԹԷ ՄԹԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ծիքակոյի անուղղաները, ամիսներ առաջ, Զնդուշի վերը. Միութեան կողմէ իրենց գէմ բացուած դատին շուրջ կարգ մը սուտ ու պատիր եւ անգոյ անուններու ստորագրութեամբ գրութիւնը մը հրատարակութիւն տուին Կուունկի եւ Ե. Հայաստանի մէջ: Անտարակոյս որ նոյն այլ գրութիւնը զրկուած էր Ամերիկահայ բոլոր թէրթերուն ալ վընարում հրատարակուելու համար: Բայց այնպէս կ'երեւէ թէ միւս թէրթերը հրատարակութիւն անյարմար բան մը նկատելով չհրատարակեցին, օրինակի համար Ֆրէզնոյի Ասպարեզը բացէն ի բաց մերժած էր հրատարակել:

Մենք եւս կարեւորութիւն չտուինք ու չպատասխանեածինք այդ սուտ բամբասանքին: Սակայն մեր այդ լուութիւնը այս չարամիտներու խմբակին քաջալերութիւն տուած է որ աւելի առաջ անցնիլ գործեն, առանց իրենց գործած շարիքներուն անդրադառնալու: Անոնք փորձեցին, զոր օրինակ, խանգարել Զնդուշի Վերաշինացին 8րդ պատգ. ժողովը, լուծել կեդրոնը եւ ապա քանդել այս Միութիւնը: Անոնք Բանտորի եւ Ե. Հայաստանի պէս թէրթերու գուները բաց գրտնելով սկսան սուտ զրպարտութիւններ յօրինել Վերաշինաց Միութիւնը բաղկացնող լաւագոյն տարբերու շուրջ, եւ զիտէք ամբաստանութեան համար ինչ հրաշալի գիւտ մը ըրած են, — այս ինչը անդամատուրք չէ վճարած, այն ինչը ժողովի չէ եկած, միւսը այսպէս է, ասիկա ալ այնպէս է: Կոչ, լուսաբանութիւն, յօրուածներ այն է որ այս բոլոր գրութիւնները ստորագրող երէկի անդրագէտները, մէկ օրէն միւսը գրադէտներ դարձած են եւ թէրթերու մէջ բան կը գրեն ու թէզեր կը պատասխանեն:

Անցնելով մարքէթին վրայ եղած սա ամենավերջի «Լուսաբանութիւններ Զնդուշի Վերը ի գատին շուրջ» խորագրով ստայօդ գրութեան, կարծ ու կարուկ պատասխաննենք փաստերով ու թիւերով եւ ոչ թէ չոր ճոռոմարտիւնութիւնով:

Պարոններ, նախ ձեր երեւակայած պայմաններուն փոխութիւր մասնածիւղերու մէջ եւ «չընահայեաց ու «ուղղամիտ» տարբերերու գոյսութիւն առնելը Միութեան մէջ, նոր չէ: Այդ ձեր ակնարկած «ուղղամիտ» տարբերը սկիզբէն ի վեր Միութեան ծոցին մէջ դտնուելով զայն գաւաճանելնին ու ձեզի հետ ըլլալնին մեզի այն օրէն ծանօթ էր:

Երկրորդ, Զնդուշի Վերաշինաց Միութեան ստացուածքը եղանգ 3000 տոլարը (որ գրամատունէն փախցուցիք եւ ձեր անհատական անուան փոխանցեցիք) ձեր քանի մը ինամիներուն կողմէ գոյացած ըլլալը բացարձակապէս սուտ է, այս սուտիրի պացացոյցը այն է որ դուք Շիքակոյի մասնածիւն զիտի հեռացուել յետոյ սա և տարբուան ըլլանին չէք կցացած:

200 տոլար իսկ իրարու քով բերել : Խսկ Կեղբոնի կողքին զործող Շիքակոյի օրինաւոր մասնաճիւղս (ինչ որ նախնական դատարանն աւ հաստատեց մեր օրինաւոր ըլլալը) 4 տարուան մէջ զոյացուցած է որպէս հասոյթ Միութեան մօտաւորապէս 800—900 տոլար եւ մաս առ մաս փոխադրած է Կեղբոն : Ասիկա կրնանք փաստել մասնաճիւղիս եւ Կեղբոնի տոմարներով :

Երբորդ կէտը, լուսարանութիւնը ըսելու տեղ պէտք է ըսել մքարանութեան մէջ սա է։ Շիքակօ կամ ուրիշ ուեւէ մասնաճիւղ ըստ կանոնագրութեան ենթակայ է կեղրոնին եւ կեղրոնն է այս Միութեան խնամակալը որքան ատեն որ գոյութիւն ունի ան, այս անհարքելի իրողութիւնը զատարանին մէջ տրուած ձեր վկայութիւնով ալ փաստուեցաւ։ Մեր կողմէն դատարան ներկայացուած էր 1925ի կանոնագրութիւնը, ձեր կողմէն 1919ի կանոնագրութիւնը, նախ քան ձեր վկայութեան երկու փաստաբաններ համաձայնեցան 1925ի կանոնագրութեան վրայ եւ ըստ այնմ դատին ընթացք տրւին։ Ձեր առաջին վկան Պրին. Պաղտ. Կէօկճեան դատարանին առջեւ երդուելէ յետոյ պատմեց (վկայութիւնը սղագիրներու կողմէ գրի առնուած է բառ առ բառ) թէ ինչպէս կազմուած էր Շիքակոյի առաջին մասնաճիւղը 1918 Դեկտեմբերին եւ վարչութիւնը մը ընտրուած ու ձեռագիր կանոնագրութիւնը մը որդեգրած (այս կանոնագրութիւնը եւս դատարան ներկայացուցիք որպէս փաստաթուղթ)։ Անկէ ետք աշխատանք եղած է թէ մամուլով եւ թէ այլ միջոցներով որ ուրիշ տեղեր ալ մասնաճիւղեր կազմուեն։ կազմուելէ յետոյ տեղի ունեցած է Զնդուշչի Վերշ. Միութեան առաջին պատգ. ժողովը 1919 Օգոստոսին Շիքակոյի մէջ։ Ան վկայեց թէ՝ 1918-1919ի եւ 1925ի կանոնագրութիւնը բոլորն ալ իրարուարայր Զնդուշչի Վերշ. Միութեան կանոնագրութիւններն են։ Այս կանոնագրութիւններու տրամադրութեամբ մասնաճիւղերը կը մնան մասնաճիւղեր եւ կեղրոնը կառավարող մարմին ու խնամակալ այս Միութեան։ Այս բանին իրողութիւն ըլլալը հաստատուեցաւ նախնական դատարանին կողմէն ալ։

Զորբորդ կէտք լուսաբանութեան մէջ 50է աւելի անդոյ ստորագրողներու սուտն է : Եւ ի՞նչ սուտ : Փաստենք : Պըն . Մելքոն Գուծուլիքան երկու տարի է որ Նիւ Եորք հաստատուած է , բայց թէ Շիքակօ գրուած լուսաբանութեան եւ թէ Նիւ Եորք, Հրատարակուած կոչին տակ կը ստորագրէ : Ընթերցողը ինք թող լուծէ այս հանելուկը : Յետոյ ո՞ւր են այս ստորագրողներէն Ե . Փարապեխեան , Մ . Մովսէսեան , Տէր Գարսարեան , Վերջապէս միւսը , միւսը , որոնց անունները հոս գրել իսկ չարժէր : Կը հարցնենք ձան Եօքառւեանի , Պետրոս Թաշճեանի և շատ մը ուրիշներու որոնք բոլորն ալ կը յայտաբարեն թէ իրենք լուր չունին իրենց ստորագրութիւնները գործածուելէն : Այսպիսի ստորագրութիւններ գտաւարութեան ընթացքին դատարան ալ ներկայացուցիք , դատաւորը (master) աչքէ անցնելէ յետոյ զարձուց ձեր երեսին ու ընդունեց զայն որպէս օրինաւոր վկայութիւն : Ձեր այս սուտին աւելի խոչըր մէկ ասպացոյցը մասնաճիւղիս տեսրակն է , որ կնիքով միասին դատարանին մէջ երեւան բերիք : Այդ տեսրակին մէջ որպէս օրինաւոր անդամներ արձանագրուած կային միայն 26 հոդի , որոնցմէ 17 հոդին այժմ մասնաճիւղիս հէտ են , այս թիւին վրայ նոյնքան մըն ալ աւելցան ձեր պատճառաւ զորս մնացած նոր ուժեր : Այս ճշգրիտ տեղեկութիւններն ու թիւերը կը բաւեն ձեր սուտերը մերկացնելու :

Հինգերորդ, որպէս թէ Պը. Տօնեանի կողմէ ձեղ յանձնաբարուած հանրածանօթ փաստաբան Թօվլիալըրկը մէր

փաստաբանին հետ համաձայնելով ձեզի ձրի գործ պիտի
տեսնէ եղեք աէ՞ (անշուշտ ձեր սեւ աչքերուն սիրոյն), մենք
չենք համաձայնած : Կը խոսառվանինք թէս առաջին անդամ
որ կը լունք այս սուտը : Կը յիշենք որ Պրն . Տօնեան կանչ
այս տողերը սոսորագրողը, եւՊրն . Մ . Յատկալուրեանի հե-
րիկուն մը դացինք Պրն . Տօնեանի օՓիսը, երկար բար-
լուսաբանութիւններէ յետոյ մենք հաւանեցանք Տօնեանի մը
ջոցաւ համաձայնիլ, սակայն ժամանակի մը վերջ Պրն . Տօն-
եան բաւ որ հակառակորդ կողմը ուեւէ համաձայնութիւն-
ընդունիր : Այս խնդրէն յետոյ պարոններ, զուք Ռօդին
պըրկին ալ չվստահելով ձեր փաստաբանը փոխեցիք . ան-
իրողութիւնը :

Վեցերորդ կէտը լուսաբանութեան մէջ, որպէս թէ մէ փաստաբանին «ակուան կը ցաւի եղեր, քիթը կը ցաւի եղեր» ականջը կը ցաւի» լսելով զատը երկարաձգած ենք ու ծախսերն ալ տասնապատկած: Հա՛, հա՛, հրաշչալի տեղի կութիւններ: Պարուններ դատին երկարաձգման և ծախսուու տասնապատկածման պատճառը մէկ փաստաբանին ձեր վրայրած անհեթեթ հիւանդութեանց մէջ մի փնտուկք, այս խնդիրը կրնաք փնտուել ձեզի սիրելի, ձեզի ձրի գործող ետքէն ալ ձեղ իր օֆիսին վանտող փաստաբան Թօրդնապրոց սըրմվ ըրած պիլերուն մէջ, որոնք արձանագրուած են Շիակոյի քաղաքապետարանին մէջ զատին վերաբերեալ պալունական արձանագրութեանց մէջ: Թօրդնապրոցի կողմէ երկայացուած այդ պիլերէն մին կը պահանջէ որ դատը մատերին ձգուի, անչուչ ձեր հաւանութեամբ, բայց մէր փաստաբանը ըլլալիք ծախսերը դիտել կուտայ. Պրն. Թօրդնապրոց կը պահանջէ որ անպատճառ մատերին երթայ խնդիրը, որուն վրայ մէր փաստաբանը կը հաւանի: Ահա թէ ոչ չծախսերուն տասնապատկումին իրական պատասխանառն: Այս կէտին հայտ կապուած ձեր ամքաստանութեան մէջ իւսէք թէ՝ մէնք անվոյցի եղած ևնք ծախսերուն համար, որովհետեւ ծախսերը Միութեան քասկէն կ'ըլլան, իսկ ձեր ձեր անհատական քսակէն: Այս դատը կը պատկանի Միութեան և բնական է որ ան պիտի լնէ ծախսերը: Իսկ զուք որ աղքատներու անունով միշտ ձեռնարկներ կ'լնէք, այդ ձեռնարկներէն գոյացած զրամնեւը ի՞նչ կը լլան, կը գործածուին նպատակի՞ն թէ ոչ զատին համար: Ասկէ զատ կը լլանք դուրսէ զուքը որ ձեր արամազգրութեան տակ եղած Զնդուչի կուսաւորչականաց Ուսումնասիրացին պահեաց գումարն ալ մտաղրած էք ծախսել զատին համար: Ալ ի՞նչ կ'ուզէք, ի՞նչ, կուզէիք որ մէ՞նք ալ մասնակցիք ձեր ծախսերուն . . . :

Եօթներորդ եւ իր նախրնթացը չունեցավ սուտը որ կը գլորէք, լուսարանութեան մէջ, որուն վաստահ ենք որ զուտ չէք հաւատար, այն է թէ մեր փաստաբանը դատաւորը խարած եւ իններին շըն առած է, յետոյ երր դատաւորը իրողութիւնը իմացած է զայրացած ու մեր պօնտին վրայ 500 տոլար աւելցուցած է: Պրայլօ՛, պրավօ՛, որ կրնաք յօթիններ այսքան վրան բաց սուտ մը, բայց այս ըսելը չի բաւեր, կը հրաւիրենք ձեզ կամ ուեւ մէկը որ երթայ ու մեր առած իններին պիկերը քննէ, եւ ան պիտի տեսնէ որ իններին շըն մեր առած օդին եղած է 500 տոլար եւ կր մնայ 500 տոլար: Բաց է դատարանին դուռը այս բաները սուուգելու համար: Հրամեցէք: Մեր ասած իններին համար տուութեան ոչ միայն զայն տուող դատաւորը հաւատացած է, այլ նախնական դատարանի դատաւորը (master) անոր ճշմարիտ ըլլալը վաւերացուցած է իր մօտ 100 էջէ բազկացած տեղեկագրով: Դուք դատաւորի (master) վճիռին դէմ ալ բողոքեցիք, անսակայն ճշմարիտ ու պարկէշտ մէկի բյալով ձեղ կրիկին լը

սե և զուք հոն ձեր վիաստարանին ու ձեր բերնով բոլոր
գիտցածը պատմեցիք, բայց մԵսը ըրը ճշմարտութեան վր-
բայ հաստատ մնաց ու երկրորդ անգամ ըլլալով հաստատեց
իր վճիռը :

Այսքանը միայն ի պատճենան ձեր այս «լուսաբանութեան»։ Դարձել կը տեսնուինք։

11th Dec

ԿՈԶ ԿՈԶԻ ԵՏԵՒԻ

Վերջին մի քանի շաբթուան մէջ մեր հայրենակիցներուն մէջ մասնաւոր մարմաջ մը արթնցած է կոչեր գրելու։ Աղ- նի զալափար մը անշուշտ եւ զովելի ։ չէ՞ որ հայրենակից- ները իրարու քով բերելու եւ Վերաշնացի ապագայ բարե- լաւութեան? շուրջ է որ կը գրուին։ Պէտք է դուրս վարել մի քնի անհատներ, կ'սուտի, որոնք կը յանդկնին կամ յան- զընած են Վերաշնացի զեկը իրենց ձեռքն անցնել եւ որոնց գործունէութիւնը այլեւս վնասակար դարձած է Հայրենակ- յական Սիութեան համար։ Ո՞վքեր են ասոնք։ Ո՞վ չի գի- տեր— Փապուճեան եւ Ստեփանեան ընտանիքներն են, ա- սոնք եղած են կեղծ, խարդախ, խարերայ, պաշտօնի փափա- րդ, ուրիշները զրաբարտող եւ մանաւանդ ոգի ի բախն աշխա- տած են Վերաշնացի Կեդրոնը Նիւ Եորքի մէջ պահել իրենց պալտօնաբաղձութեան յագուրդ տալու համար միայն։ Զա- նացէք Լորէնս տաննիւ Կեդրոնը, եւ այս երկու ընտանիքի անդամները անմիջապէս պիտի քաշուին զործունէութենք, անզամ մը փորձեցէք, եթէ չէք հաւատար։

Ահա այս էր «Ե. Հայաստան»ի, «Բանեոր»ի մէջ հրապարակուածներուն եւ մանաւանդ մեր «բանաստեղծ» Պըն. Մէկի Խաչօհանի եւ մի քանի հայրենակիցներու կողմէ ստորագրուած հռչակաւոր կոչին բուն խմաստը:

Նպատակս չէ անշուշտ այս դրութիւններուն հակառակը փաստել, ասիկա կը թողում իմ Հայրենակիցներուս զատո-րութեան, միայն հոս մի քանի տողերով պիտի ջանամ կարդ մըպարդ իրողութիւններ մէջտեղ դնելով ինդերը պարզել: Նիւ Եռքքի մասնաճիւղը ժողով մը կը սարքէ Յունիսի առաջին Կիրակին. ներկաները մեծամասնութիւն չեն կազ-մեր. կանոնազրի արամադրութեան Համաձայն երկրորդ ժո-ղովը օրինաւոր է, ուստի հրաւիրագիրներ կը զրկուին մատ-նածիւղի քարտուղար Պրն. Մելիք Խաչօսանի կողմէ:

բրբք պիտի չաշխատիմ Տիկին Ստեփանեանը զովել,
ի այս թէ պիտի բանմ որ այդ կոչերուն տակ ստորագրուն-
ըն ուեւ մէկէն չառ աւելի օգնած է մեր Վերաշնացին թէ
նիւթապէս եւ թէ բարոյապէս :

“Ըստուք որ տուրք վճարած չէ և այլին. նախ ըսենք որ նիւ¹ նորուք մասնածիւզր տուրքէ ազատ գված է կինսերը: Պրն. Մե-²թք գիտէ ասիկա: Յետոյ անխղջութիւն է այս մասին մեղադ-³րել մէկը որ տառով, քանով և յիսունով մասնակցած է նանցքներու մէջ է հանգանակութեանց ատեն:

ւըստ որ ան զործօն անդամ չէ : Կրկին Պրն . Մելլք փետէ թէ նիւ Եորքի մասնաճիւղը իւ ժողովներէն մէկուն մէջ որոշած է բայուր կիները անդամ ընդունիլ :

Արդ, արգեօն նիւ Եորքի մասնաճիւղը սիսա՞լ մը զործեց երբ Տիկին Ստեփանեանի պէս աղնիւ տիկին մը պատգա- մաւոր ընտոնու : Ա-

Ներքին ըստըց ։ Անշուշտ ոչ ։
Ներքին ըստըց ։ Անշուշտ ոչ ։
Ներքին ըստըց ։ Անշուշտ ոչ ։

Ոչ մէկ զիտողութիւն, ոչ մէկ առարկութիւն։ Առենապեսուհին կը սպասէ որ Պրն։ Մելիք օր մը մեր տունը գայ եւ նամակները սառագրուին եւ կնքուելով Կեդրոն զրկուին։ Չեկաւ, բայց եկան իր նամակները։ Կը խնդրեմ մեր հայրենակիցներէն որպէս զի ուշի տշով հետեւին սա մի քանի տողիրուն։ Պրն։ Մելիք, մեր ժամանածիւղին ատենապակիրը, մէկ նամակ Կեդրոն, մէկ հատ մեր պատղամաւորին եւ մէկ հատալ ատենապատին կը զբէ բակլով թէ եղած լնարութիւնը ապօրինի է, որովհետեւ պատղամաւորը զործօն անդամ եղած չէ։ Շատ յու, իր իրաւունքն իւ իրրիւ անդամ մը բոզոքիւ ընարութիւնն ատեն. ատիկա չըրաւ, և շարաթ մը վերջ մեր այս իներացի պարոնը ժամանածիւղին կնիքը գործածելով առանց ատենապատի սառագրութեան կը Կրէ վերոյիշեալ նամակները։ Թող ընթերցողները վճռեն թէ Պրն։ Մելիք իրաւունք ունէ՞ թողովի մը մէջ արուած որոշումի մը հակառակ լուրեր հաջորդելու, առանց ատենապատի սոտրագրութեան և մահաւանդ ժամանածիւղին կնիքը զործածելու՝ իր անհատական կարծիքին տակ։

Մասնաճիղին վարչութիւնը ժողովի կահջուեցաւ մեր տունը . և ներկայ էի իրեւ մասնաճիղի անդամ մը : Զկըրցանք համոզել այս մարդը որ իր բաժնը շիտակ չէր, յամառեցաւ, մեաց : Վարչութեան երեք անդամներէն երկուքը որոշեցին որ խնդիրը ինքնութեամբ զրկուի կեզրոն եւ Պատգ. ժողովին :

ԱՀԱԼՈՒԹԻԿ Եղածը իր խսկութեանը մէջ։ Ընթելցովին կը
մնայ գատիկ ու վճռել։
Նիւ Եռք Ա. ՓԱՊՈՒՃԵԱՆ

Ա. ՓԱՊՈՒՃԵԱՆ

ԴԷՄԻ ՄԱՆԼԵՆ

Այսօրումն պէս կը յիշեմ, 1909ին, Սուլթան Համիտի պահընկցութեան առթիւ Զնդուչ պաշարուած էր հազարաւոր թուրքերու և քիւրտերու կողմէ:

Սմբողջ Զնդուշ եռուղեռի մէջ էր, քալաքը կը պատրաստուէր ինքզինք պաշտպանել թշնամիին դէմ: Դիրքեր գրաւուած էին Զնդուչցի քաջերուն կողմէ, մոռցուած էին յարանուանական եւ կուսակցական չնչին հաշիւները: Զընդուչի ապահովութիւնը ամէնքի միակ նշանաբանն էր:

Այս թոհ ու բոհին մէջ էր որ մեր Հայրենակիցներուն
մէջ նորակազմ կուսակցութեան մը անդամները կը դիմէն
Չնգուշի պաշտպանութիւնը զեկավարող յանձնախումբին եւ
կ'առաջարկին որ իրենց կուսակցութեան համար մասնաւոր
զիրք մը յատկացուի :

Պաշտպանութեան յանձնախումբը յարմար չի տեսներ այս առաջարկին՝ դործազրութիւնը՝ պարզելով անկից յառաջ գալիք վնասները։ Կուսակցականները սակայն անդրդուելի կը մնան իրենց առաջարկին մէջ։

Յանձնախումբի անդամները ճարակատ միայն մէկ պատասխան կուտան . «Դէպի մահլէն», մատնանշելով թրքաց թաղը :

Եթէ գուշք չէք ուզեր հնապանդիլ ամբողջ Զնդուցյիներու կողմէ ընտրուած պաշտպանութեան յահճնախումբի որս-չումներուն, անցէք դէմի մահլին եւ մենք պատրաստ ենք ձեզի դէմ եւս կուռելու:

Աւրախալի է ըստ որ այս պարոնները կը զիջանին եւ հնագանելով յանձնախումբին կը պաշտպանեն Զնդուցը իր թշնամիներուն դէմ :

Զնդուչը Վերաշինացը այժմ նոր փուլի մը մէջ մտած է, երկար տարիներւ աշխատութեանց արգիւնքը երեւան բեռնելու շրջանին մէջ է, սակայն ցաւալի է ըսել որ իր այս վեպիքի շրջանին մէջ մի քանի նեղմիտ կուտազականներ առէն բան կ'ընեն Վերաշինացի բեղմնաւոր գործունէութիւնը սրբիկելու համար : Անոնք կը փորձեն անուանաբիկը Միութեան հաւատարիմ եւ անձնազոհ հայրենակիցները :

Այժմ ալ ատենն է որ մենք եւս դոչենք մեր վաղեմի հայրերուն պէս .— «Ծէմի մահկն» :

Խոսքս ձեզի է պարոնայք Մշլիք Խաչօնան եւ Ս. Յակոբեան, ինչպիս նաև ձեզի պէսներուն. անցէք դեմի մահվն: Մենք պատրաստ ենք Վերաշինացի սիրոյն կռուիլ ձեզի նման խանգարիչներուն դէմ:

Զեղի համար ոււէ պատուաւոր միջոց արժէք չի ներկայացներ, ատիկա աղջկ հասկցած ենք. ուստի կը հրաւիրենք ձեզ որ դէմի մահլէն կըթաք:

ՊԵՏՐՈՍ ՍՏԵՓԱՆԵԱՆ

ԺՈՂՈՎՆԵՐ

Առաջին Սիթիի մասնաճիւղին անդամական ժողովը տեղի ունեցաւ Օգոստ. 9, Կիրակի օր, անդամներու մեծամասնութեան ներկայութեամբ : Ժողովը բացուցեցաւ ատենապետ Պրին . Ա. Թուրոյեանի կողմէ :

Կարդացուեցան կելքոնի զրկած նամակը եւ չըջարեքա-
կանը : Ժողովը նկատի առաջ իր պատգամմաւորին Պրն . Գ .
Մինասևանի հանած անտեղի աղմուկը Յուլիս 4ի Պատգ .
ժողովին մէջ . նոյնպէս կարդացուեցաւ քանի մը հայրենա-
կիցներու կողմէ ստորագրուած «կոչ» մը : Ժողովը բացատ-
րութիւն ուղեց իր պատգամմաւորէն որ ոյն կոչին տակ ստո-
րագրած էր : Այս առթիւ Գ . Մինասևան պատանձեցաւ , կար-
ծես թէ ինքը ըըլլար հոն նստողը : Անօր կողմէ ոչ մէկ լու-
սաբանութիւն տրուեցաւ «կոչ»ի մասին , որով ի յայտ կու-
գար թէ Գասրար Մինասևան եւս զոհ եղած էր Մելիք Խա-
չօնեանի , ինչպէս եղած էր Պրն . Խ . Ազնաւորեան , միայն թէ
Գ . Մինասևան քաջութիւնը չունեցաւ ասիկա ըսելու : Բայց
Գ . Մինասևանի լուութիւնը նոյնքան խոստովանութիւն մըն
էր իր սիալ ընթացքին , քանի որ իր ստորագրած կոչին շուրջ
եղած հարցումներուն , որոնք եղան կեդրոնի անդամներէն
մէկուն կողմէ , չկրցաւ գէթ մէջ իրողութիւն ցոյց տալ : Ժո-
ղովը շատ թեթեւ կերպով մօտեցաւ Գ . Մինասևանի այս
ծանր յանցանքին , նկատի ունենալով որ ան գործած էր չգի-
տութեամբ :

*“Փողովը ապա ընտրեց իր պատգամաւորը Սեպտ. 6-ին
տեղի ունենալիք պատգ.՝ փողովին համար:*

*** Զնդուչը վերջ . Միութեան նել Եորքի մասնաճիւղին ժողովը եւս տեղի ունեցաւ Օգոստ . 16ին , կեզր . Վարչութեան հովանաւորութեամբ եւ անդամներու մէծամանութեան ներկայութեամբ : Ժողովը բացաւ Կեզր . Վարչութեան առենադպիկի Պրն . Անդրէս Մինասեան որ լեցուն լուսաբանութիւններ տուաւ պատզ . ժողովի եւ մէկ քանի հայրենակիցներու կողմէ Հրատարակուած «կոչ»ին մասին : Ցիշեալ կոչին տակ ստորագրող Պրն . Խաչ . Ազնաւուրեան ցաւ յայտնեց որ խարուած էր Մելիք Խաչօեանէ : Այս վերջինը իր ստորագրութիւնը դրած էր գրութեան մը տակ որ երբեք չէր համապատասխաններ իր համոզումներուն : Պրն .ը հաստատելու համար իր ցաւը ստորագրեց ստորև տրուած գրութիւնը եւ թոյլտուութիւն տուաւ որ ան Հրատարակուի հայ մամուլին մէջ : Ահա Պրն . Ազնաւուրեանի հերքմնագիրը —

ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Նու ստորագրեալս, լսելով Կեդրանական Վարչութեան
կողմէ հրամակուած Նիւ Եռքի Մասնաճիւղին Օգոստոս 16-ի
ժողովին մէջ տրուած բացատրութիւնը,

Կուգամ յայտարարելու թէ Մելիք հաշոյեանի կողմէ պատրաստուած կոչին տակ իմ ստորագրութիւնս չարաշար կերպով գործածուած ըլլալով, կը բողոքեմ Պրես. Մելիք հաշոյեանի առած բայլին դէմ եւ կը յայտարաեմ թէ այդ կոչին մէջ գրուածներուն բոլորովին հակառակ եմ: Այն քուղքը որ ես ստորագրեցի՝ այդ կոչին մէջ ըսուածներէն բոլորվին տարքեր էր:

Նիւ Եռլի, Օգոստոս 16, 1931

Խ. ԱԶՆԱՔՈՒՐԵԱՆ

Փողովք ապա իր որոշումները տուաւ և կարգադրութիւններ ըրաւ իր մասնակցութիւնը բերելու յառաջիկ Պատգ . ժողովին : Լաւ տպաւորութեան տակ վերջացաւ ժողովը : ՆԵՐԿԱՅԱ

ՔԱՆԴԻԶՆԵՐԸ ԴԱՐՁԵԱԼ ԳՈՐԾԻ ՎՐԱՅ

Շիքակոյի մէջ բոյն գրած Միտոթեանս յայտնի հակուակորդ ֆլիքին քանդիչ գործունէութեան կողքին այս վեց ջերս հրապարակ ելած են իրենց զաղափարի ընկերներն | Յակորեան եւ Մ . Խաչօնան , որոնք կ'աշխատին Վերջ . Ու ութիւնը քանդելով զօրացնել Շիքակոյի ֆլիքին ձեռքբրը :

Եկապոյի վլիքը երեք տարուան ընթացքին թոյն բարկեց իր գաղափարի ընկերներուն սրտին մէջ, որպիս անոնք ալ իրենց կարգին կարևորան այդ թոյնով վարակել պատուական հայրենակիցներու մտքերը:

Բայց մեր լրջախոհ հայրենակիցները գաղափարական հայրենասիրական զգացումներով տոպորուած զօրապի դարձան Միութեան վեհ նպատակին, եւ անոր իրագործած համար իրենց նիւթական եւ բարոյական զոհողութիւնները Միութիւնը պահեցին ապահով եւ անոնք դարձան Միութեան բրդը պաշտպանող պահակներ՝ քանդիչներու ոտնձգոթեանց դէմ:

Ս. Յակոբեան թոյնի ազգեցութենէն խելագարած, ի ժահը թափած է Պատղ. ժողովին մէջ, որպէս զի ժողովի խանգարէ, յետոյ կոչ հրատարակելով Կեդրոնը և ժողովի ատենապետը գտապարտած է, անշուշտ իր պատասխանատուութիւնը թաքցնելու թափանցիկ փութկոտութեաբ:

ևս իրեւ նախանձախնդիր Զնոպուշի մը կուգամ ըսկոյ որ Ս. Յակոբէանի եւ իր համախոհներուն առած այս եղանք ըսկի ընթացքին պատասխանատուն մենք ենք, որովհետեւ մեր Միութիւնը իր խիստ կարգապահութիւնը չի գործադրեր: Անցեալին մէջ նոյն դաղափարին պատկանող մէկն իր յանցանքը գործեց, զայն չպատժեցինք. այսօր Ս. Յակոբէան մը եւլած է Միութիւնը մատի փաթթոց ընելու եւ քաղելու դայն եթէ կրնայ: Եթէ այսօր ալ ներողամտութեան ոգի ցոյց տանք, պէտք է լաւ համոզուինք որ վաղը որք մը պիտի ելլէ եւ Միութեան նպատակին իրագործման աջակցութեան աջակցութեան հանէ:

իմ արդար բողոքս եւ խնդրանք պիտի ըլլայ յառաջիկ
Պատգ. ժողովէն որ իր վճռականութիւնը ցոյց տայ եւ մէ
շարքերէն վտարէ այդ թունաւոր եւ քանդող անհատները
որպէս զի մենք ազատօրէն կարենանք քալել այն ճամբար
որ մեզ կը տանի մեր նպատակին իրադորձման, դէպի նոր
Զնդուցի կառուցումը:
Կօրէնս

ՇիքԱԿՈ — Պրն. Խ. Պապաեանի ընդ Օր. Մ. Պարոնեանի ամուսնութիւնը տեղի ունեցաւ Օգոստ. 8-ին, սր. պապի արարողութիւնը կատարեց Արք. Վ. Քչնյ. Կիւլտալիան կնքահայրութեամբ Տէր և Տէկ. Յ. Յակոբեանի: Տէր յօն խրատականն իւստ կառապատճեամբ Պրն. Լ. Մասոսի հռուսեան:

Պատշաճորէն հիւրասիրուեցան հարսնեւորները, ուրած խութիւնը տեևց մինչեւ ժամը մէկ: Կը յուսանք թէ նորու պասկները հայ ընտանեկան կեանքին մէջ իրենց պատուի լոր տեղը պիտի գրաւեն, եւ առ այդ կ'ընենք մեր բարեմարդի թութիւնները:

*** Տէր եւ Տիկ. Կ. Զինագործեան մանչ զաւակվի բաղաւորության: Մէր ինձակցութիւնը կը յայտնենք:
*** Տէր եւ Տիկ. Յ. Քարպուտեան եւ Տէր եւ Տիկ. Կէօֆֆեան Քալիփորնիա մեկնեցան հռն հաստատուելու նույնական: Բարի երթ եւ յաջողութիւն կը մաղթենք: